

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԶԱԿԻՐԵԱՆ

# ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

### XVIII

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Գ. Ալվերդեանի եւ նրա հետեւորդների տւած կենսագրական տեղեկութիւններով Սայեաթ Նովան մինչեւ մահ մնաց «աննշան կրօնաւոր»։ Այս կարծիքը տիրող էր մինչեւ 1913 թ., երբ Յովհանումանեանը հրապարակ դրեց մի ուրիշ տեսութիւն, որի համաձայն Սայեաթ Նովան, հոգեւորական դառնալուց յետոյ էլ պահել է իրակի թագաւորի համակրանքը եւ վերջինիս պնդումով՝ ձեռնադըրւել է եպիսկոպոս Հայուատի վանքի, որին ենթակայ էին Վրաստանում ապրող բոլոր հայերը։ Իր այս գիւտը Յովհանումանեանը հրապարակեց 1913 թ., Հայ Գրողների Ընկերութեան կազմակերպած մի երեկոյթում։ Մի ճառով Յովհանումանը մանրամասնօրէն պատմեց էլմիածնի դիւաններում կատարած իր հետազօտութիւնների մասին,\*) որից, իրը թէ պարզում է, որ կնոջ մահից յետոյ, 1768թ., Սայեաթ Նովան Դաւիթ Եպիսկոպոսից ձեռնադրւել է կուսակրօն եւ, իրը թէ, հայոց մէջ գոյութիւն ունեցող սովորութեան համաձայն ստացել է Դաւիթ անունը։ Յովհանումանի ասելով՝ Իրակի թագաւորի եւ Սիմէոն ու Ղուկաս կաթուղիկոսների միջեւ փոխանակւած գրագրութիւնից երեւում է, որ թագաւորը պնդել ու յաջողացրել է իր սիրելի սազանդարին Եպիսկոպոս ձեռնադրել տալ եւ նշանակել թեմական առաջնորդ Հայուատում։ Այս Եպիսկոպոսը, այսինքն Սայեաթ Նովան, միշտ Յովհանումանի խօսքով, արժանացաւ «լուսարար» պատւառոր կոչումին, բայց հակառակ այդպիսի բարձր դիրքի, իր վաստ վարք ու բարքով անվերջ վրդովում էր հոգեւոր բարձր իշխանութեան հանգիստը։ յաճախ այցելում էր Թիֆլիս, ուր ուրախ

\*) Իրապէս պարզեց, որ Էջմիածնի դիւան կոչւածը Գ. Գ. Աղանեանի «Դիւան Հայոց Պատմութեան» 3րդ, 4րդ, 5րդ, եւ 6րդ հատորներն էին, ուր կան Էջմիածնի կարուղիկոսների եւ Իրակի թագաւորի միջեւ փոխանակւած մի շարք համակներ։

եւ անառակ կեանք էր վարում եւ, առհասարակ, իրեն այնպէս էր պահում, որ Ղուկաս կաթուղիկոսը խօսք չէր գտնում դատապարտելու համար նրան («Լիբր Դաւիթ բորչալուեցի», «զիսով անտարի» եւայլն)։ Հակառակ այսպիսի վարք ու բարքի, Դաւիթ եպիսկոպոսը միշտ գտնում էր զօրաւոր պաշտպանութիւն եւ պատժից զերծ էր մնում։ Նրան պաշտպանում էին իրակի թագաւորը, թագաժառանդ Գէորգին եւ Վրաստանի արքունի ազնւականութիւնը։ Այս պաշտպանութիւնը Թումանեան բացատրում է Սայեաթ Նովայի վըրաց արքունիքում վայելած համակրանքով։ Թումանեանը պնդում է նաեւ, որ մատնանշւած գրագրութեան մէջ յիշում է եւ Դաւիթ եպ. -ի գրական տաղանդը, թէեւ «Դիւան Հայոց Պատմութեան»-ների մէջ նման յիշատակութիւն ինձ չյաջողւեց գտնել։ Ի վերջոյ, Թումանեանը աւելացնում է, որ Թիֆլիսը Ազա-Մահմադ խանի ձեռքով դրաւելուց յետոյ Հախպատի վանքի վանահայրերի շարքում Դաւիթ եպ. -ի անունը այլեւս չի յիշատակում։ Այս բոլորի հիման վրա Թումանեանը գտնում է, որ Սայեաթ Նովան նոյն այդ Դաւիթ եպիսկոպոսն է։

Յովհ. Թումանեանի այս նոր «տեսութիւնը» անմիջապէս ընդունւեց Սայեաթ Նովայի վերաբերող «օտար» գրականութեան մէջ։ Առաջին իւրացնողն ու հրապարակողը եղաւ ոռւս բանաստեղծ Վայերի Բրիւսովը («Հայաստանի Բանաստեղծութիւն» հատորում 1916թ.), որ աւելի մեզմ գոյներով կրկնեց Թումանեանի առաջ բերած տւեալները՝ բացատրելով Սայեաթ Նովայի վարք ու բարքը նրա անյագ սէրով դէպի երաժշտութիւնը, երգն ու մէջլիւները։

Նոյն բանը տեղի ունեցաւ եւ վրաց գրականութեան մէջ, ուր Գրիշաշվիլին, 1918 թւին, իր արդէն մեզ ծանօթ գրքում, վերաբերութիւնանի փաստերն ու մտքերը։

Հայոց գրականութեան մէջ Թումանեանի տեսութիւնը հանդիպեց Լէօի առարկութեան («Հորիզոն», 1913 թ.)։ Թէեւ 15 տարի անցած, 1926 թւին, նոյն Լէօն «Խորհրդ. Հայաստան» թերթում (№ 2) դուրս եկաւ պաշտպանելու այն միտքը, թէ Սայեաթ Նովան եղել է Հախպատի վանքում եպիսկոպոս եւ, ուստի, լաւ գրաբառագիտ էր։ Նոյն թերթում (№ 88) շատ լուրջ եւ հիմնաւորւած առագիտ էր։ Նոյն թերթում (№ 88) շատ լուրջ եւ հիմնաւորւած առարկութիւններով Լէօի դէմ դուրս եկաւ Գ. Ասատուրը, որի կարծիքով Սայեաթ Նովան բնաւ եպիսկոպոս չէ եղել։ Վրացի յայտնի բանաստեղծ Գր. Օրբելիանին, որ ծնւել է 1800 թ., Սայեաթ Նովայի դեռ ողջ եղած ժամանակը եւ շատ լաւ ծանօթ էր Սայեաթ Նովայի դեռ ողջ եղած ժամանակը եւ շատ լաւ ծանօթ էր Սայեաթ Նովայի ստեղծագործութեան, իր երկերում ձեւով ու բովանդակութեամբ հետեւում էր նրան, ճանաչել է Սայեաթ Նովային սոսկ որ-

պէս պարզ վարդապէտ : Վերջապէս , Սայեաթ Նովան ինքն էլ վրացերէն այն երգերում , ուր յիշում է իր հողեւորական լինելը , իրեն անւանում է միշտ վարդապէտ եւ ոչ երբեք եպիսկոպոս :

Ապա Ասատուրը հաստառում է , որ Ղուկաս կաթուղիկոսի եւ իրակլի թագաւորի գրագրութեան մէջ յիշատակող Դաւիթ եպիսկոպոսը ծագումով Ղորղանեանների աղնաւական տոհմից էր : Ղորղանեանները իրակլի Բ.-ի թագաւորութեան վերջին շրջանում շատ բարձր գիրք ունէին վրաց արքունիքում : Այդ Դաւիթին էր ուժգնօրէն պաշտպանում իրակլի թագաւորը , ինչպէս եւ Վրաստանի ողջ արքունիքը : Վրաստանի հայերից Դաւիթ եպիսկոպոսին պաշտպանում էին այնպիսի անձնաւորութիւններ , ինչպէս , Արքեպիսկոպոս Յովսէփ Արղութեանը , իշխան Սողոմոն Արղութեանը , միշկարբաշ<sup>\*</sup>) Յովսէփ Ղորղանեանը , միշկարբաշ իշխան Յովսէփ Բեհրութեանը , թիֆլոս քաղաքի մելիք Դարչի (Մնացական) Բեհրութեանը եւ ուրիշներ :

Հախատի վանքի պատմութեան մէջ , մինչեւ 18-րդ դարը , պատահում են մի քանի Դաւիթ եպիսկոպոսներ : Դրանցից մէկը , Ախովերգեանի ասելով , «Հաղպատու առաջնորդում» էր Սայեաթ Նովայի ժամանակները : Այդ եպիսկոպոսներից ոչ մէկը , սակայն , չի համապատասխանում թումանեանի ասածներին , եւ Սայեաթ Նովայի եպիսկոպոս լինելու պարագան , թումանեանից զատ ոչ ոքի յայտնի չէ :

Սայեաթ Նովայի եպիսկոպոսութեան ինդիրը հանդամանօրէն քննութեան է ենթարկել եւ Մելիքսէթրէկը եւ յանգել այն եղբակացութեան , որ Ղուկաս կաթուղիկոսի գրագրութիւնը իրակլի թագաւորի հետ վերաբերում է ոչ թէ Սայեաթ Նովային , այլ Դաւիթ եպիսկոպոս Ղորղանեանին : Լէոնիձէն իր հերթին տեղեկութիւններ է հաղորդում Դաւիթ եպ . Թաւիլդարեանի գոյութեան մասին , որ ժամանակակից էր Սայեաթ Նովային , եւ Ղուկաս կաթուղիկոսի գրութիւնները կարող էին վերաբերել նրան :

Ինչպէս արդէն ասել ենք , Սայեաթ Նովայի հողեւորական անունը Ստեփաննոս էր . այդ անունը պէտք է պահւած լինէր եւ վանքում : «Կալմասորա»-ն վկայում է , որ 1800-801 թ . Եռնա Խելաշվիլին տեսել է Սայեաթ Նովային Հախատի վանքում իրեւ հասարակ վարդապէտ :

Այս ամենը հիմքից հերքում է Յ . Թումանեանի տեսութիւնը Սայեաթ Նովայի եպիսկոպոս լինելու մասին : Մեր բանաստեղծը ե-

\* ) Միշկարբաշ - պալատական բարձր պաշտօն . grand veneur

դել է սովորական վարդապետ եւ, որպէս այդպիսին, ոչնչով աչքի չի ընկել ուրիշ վարդապետների շարքում։ Լուսարար անունը, «Ռ տրուում է նրան, եպիսկոպոսներին յատուկ բարձր անուն չէ - այդ դէպքում կասւէր «աւագ լուսարար», «մեծն լուսարար» - այլ վահական կեանքում համեստ մի պաշտօն։ Եւ բանաստեղծը ինքն էլ այդ իմաստով է ներկայացնում իր «լուսարար» կոչումը։

Հաղպատու լուսարար Սայեաք Նովին եմ,

Մէ կանքեղիս վարելու ձէք չունեմ։

## XIX

### ԱԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԸՆԿԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Սայեաթ Նովայի սիրահարութիւնը, որի մասին խօսեցինք ԺԶ. զլլսում, տեւեց բաւական երկար, մինչեւ 1759 թ. կէսերը, երբ տեղի ունեցաւ վերջնական խզումը սիրահարների միջեւ։ Խզումի պատճառը, ըստ երեւոյթին, պէտք է փնտրել սիրուհու հոգեկան անկայուն յատկութիւնների մէջ։ նա, ինչպէս տեսանք, սէր էր բաշխում ոչ միայն մեր բանաստեղծին, այլ միաժամանակ եւ ուրիշներին։ Սայեաթ Նովան այդ տեսնում էր եւ սրտի ցաւով ու հոգեկան բարդ ապրումներով աստիճանաբար եւ դանդաղ հեռանում էր սիրուհուց, մինչեւ որ վերջնականապէս լքեց նրան։

Վրացերէն երգերի մէջ տրած է խզումի պատճառների բացատըրութիւնը, իսկ հայերէն երգերում ներկայացւած են բանաստեղծի հոգեկան ապրումները։ Ահա մի քանի հատւած՝ յօրինւած խզումի օրերին։ 1758 թ. № 22,5 երգում Սայեաթ Նովան ասում է.

Մերնելուս համար չի'մ հսկում, ցիզի համա իմ լալու։

Նոյն 1758 թ. մայիս 10-ին, № 46,4 երգում բանաստեղծը այսպէս է արտայայտում։

Ով որ ինձ շինից դիվանա,

Սուրբ Կարապետէն խիվանա,

Այսինքն՝ ով ինձ խելահան արաւ, թող Սուրբ Կարապետից անիծւի։

Բայց Սայեաթ Նովայի այդ օրերի տրամադրութիւնները ամենից լրիւ կերպով արտայայտուած է 1759 թ. սկզբին յօրիւած № 34 հայերէն երգում, որից առաջ բերենք ցցուն կտորները։

Աշխարըն՝ մի փանջարա է, - բաղերումէն բէզա՞րիլ իմ,

էրէգ լաւ էր կանց վուր էսօր, - վաղերումէն բէզարիլ իմ։

Մարք համաշա մէկ չի' ըլի, - խաղերումէն բէզարիլ իմ։

Գուզիմ բռչի բըլրուի պէս, - բաղերումէն բէզարիլ իմ։

Ղուրքըս հնդու նամփու չէ՛ գնում՝ շատացի է խալսի  
սուտըն,

Քըսանըն՝ մէ դուլ չի՛ն պահում, - աղերումէն քէզարիլ իմ։  
Դօստիրըս՝ դուշման ին դարի - եադերումէն\*<sup>\*)</sup> քէզարիլ իմ։  
Սայեաք նօվին ասաց՝ դարդըս կանց մէ նարին\*\*<sup>\*\*</sup>)  
Զունիմ վաղվան քաղցըր փառքն, իիմի դառըն շատացի է։  
Բըլբուլի պէս հնդուր կուլամ՝ վարքիս եարըն շատացի է,  
Զի՛ն քօղնում վարտին քացվելու, - քաղեր(1)ումէն քէզարիլ  
իմ։

Այս տողերի մէջ ներկայացւած պատկերը, անշուշտ, վկայում  
է Սայեաթ նովայի հոգեկան ծանր ապրումների մասին։ Բանաստեղ-  
ծը հիասթափած՝ պատրաստ է խգելու ամէն կապ անցեալի հետ։  
Նրան այլեւս ոչինչ չի հրապուրում՝ ո՛չ սիրուհին, ոչ սազանդարի  
պաշտօնը երեւելի մարդկանց մօտ, ոչ իսկ իր տաղերը. նա փնտրում  
է կեանքի նոր բովանդակութիւն, նո՞ր կեանք։

Եւ ահա, այս ապրումների ազգեցութեան տակ, Սայեաթ նո-  
վան սկսում է մտածել ընտանիքի մասին, եւ արդէն 1759 թ. վեր-  
ջերը, յամենայն դէպս, ոչ ուշ քան 1760 թ. սկիզբը ամուսնում  
է։ Նրա կինը, ըստ երեւոյթին, թիֆլիսեցի էր, Մարմառ անունով,  
ինչ որ Շավերդի դուստրը՝ Շավերդէնց աղջիկը։ Մելքոնէթրէդը են-  
թագրում է, որ այս Շավերդը իքահատցի էր, այսինքն՝ նոյնակս  
վրաստանցի հայ։

Սայեաթ նովայի ամուսնական կեանքը երկար չտեւեց. 1768 թ.  
Մարմառը մեռաւ եւ թաղւեց Խոջիվանքի գերեզմանատանը։ Ախովեր-  
գեանը 1852 թ. առաջ տեսել է նրա տապանաքարը գերեզմանատան  
հին մասում. քարի վրա գրւած է եղել վրացերէն. «Բրօնիկօնի 45ի  
(1768 թ.) էս գերեզմանում կամ Սայեաք նօվու կողակից Մարմա-  
ռն. ինձ ողորմի ասէք»։

Մեզ չի հասել եւ ոչ մի տեղեկութիւն այն մասին, թէ ինչպէս  
է գասաւորւել Սայեաթ նովայի ընտանեկան կեանքը, բայց պէտք  
է ընդունել, որ ամուսնութիւնը մեծ չափով ազդեց բանաստեղծի  
ստեղծագործութեան վրա։ Յայտնի է, որ Սայեաթ նովայի ձեռքով  
գրւած հայերէն եւ թիւքերէն երգերի մէջ չկայ ոչ մէկը, որ 1759թ.  
յետոյ նշանակւած լինի։ Այս փաստից Գ. Ասատուրը եզրակացնում  
է, որ 1759 թ. Սայեաթ նովան բոլորովին թողել է սազանդարու-  
թիւնը եւ հոգեւորականութիւն է ընդունել, մինչդեռ հիմք կայ  
կարծելու, թէ Սայեաթ նովան վրաց արքունիքը թողել է 1762 թ.։

\*.) Եաղի - քշնամի։ \*\*) Ճարի - վտակ։

Անձնապէս ինձ թւում է, որ Սայեաթ Նովայի ստեղծագործութեան մէջ ամուսնութիւնից յետոյ կատարւել է խորունկ բեկում: Նա այլեւս չէր ձգտում արժանանալ սիրուհու փոխադարձ սիրոյ, է՛լ նախանձի զգացմունք չէր մնացել, չէր վախենում կորցնել սիրուհուն, սիրային ստեղծագործութեան մղումներ դոյցութիւն չունէին այլեւս, այդ պատճառով բանաստեղծն իր հետազայ երկերի մէջ Դաւթարում արժանագրելու արժանաւոր բան չի գտել: Նա երգում էր հին երգերը եւ եթէ նոր երգ էլ էր յօրինում, դրանք հին եղանակների կրկնութիւններ էին: Ամուսնութեան բերած ներքին հոգեկան անդորրութիւնը զրկեց նրան ստեղծագործական թոփչքից: Նրա գլխին եկաւ նոյնը, ինչ որ ուրիշ բանաստեղծների հետ էլ է պատահում: Այդ այն հոգեկիցակն է, որ այնպէս գեղեցիկ կերպով արտայայտել է Բայրուն՝ «Դռն - Ժուան»-ում.

Think you, if Laura had been Petrarch's wife,  
He would have written sonnets all his life,

(Կարծում ես դու, որ եթէ Լառուրան Անէր Պետրարքայի կինը, իր ամբողջ կեանքում նա հնչակնե՞ր կը գրէր).

Այս ամուսնութիւնից Սայեաթ Նովան չորս զաւակներ ունեցաւ. անդրանիկը՝ Մելիքսէթ՝ ծնւեց 1760 թ.: Երկրորդը՝ Օհան (Իվան)՝ մեռաւ Պետրուրգում 1823 թ.: Երրորդը՝ Սառա: Չորրորդը՝ Մարիամ: Երկու որդիներն էլ ընդունեցին հօր գրական անունը. Օհանը կոչւում էր Սէյլիդով, իսկ Մելիքսէթը եւ իր յաջորդները՝ Սակոչնով: Մելիքսէթը ունեցաւ զաւակներ, որոնցից մէկը Թիֆլիսում յայտնի քահանայ էր՝ Տէր-Մովսէս Սայեաթնեան, որից Ախմետը եղեանը ստացաւ Սայեաթ Նովայի Դաւթարը եւ կենսագրական տեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ Երկրաչափ պաշտեղեկութիւններ: Տէր-Մովսէսը ունէր մի որդի՝ Երկրաչափ պաշտեղեկութիւններ:

Սայեաթ Նովայի երկու որդիներն էլ բանաստեղծական որոշ շընորհք են ժառանգել հօրից: Անդրանիկ որդին՝ Մելիքսէթը, (թւում է թէ քահանայ եղած պիտի լինի) իր հետը Մովսէսի է տարել հօր Դաւթարն ու ասզը եւ մտերիմների շընանում երգում ու նւազում էր: Օհանը նախապէս առանց յաջողութեան առեւտրով էր զրադւում հիւսային Կովկասում, ապա վրաց արքայազնի հետ տեղափոխւեց Պետերբուրգ եւ մնաց նրանց մօտ իրը սազանդար: Նա յիշողութեամբ

գրի առաւ հօր երդերը մի երկուրդ Դաւթարի մէջ, որ պահւած է Պետեղբուրդի Գիտութեանց ձեմարանի Ասիական Թանգարանում :

Բացի այս հատուկտուր տեղեկութիւններից Սայեաթ Նովայի ընտանիքի մասին, կայ նաև մի յուզիչ պատկեր բանաստեղծի անդրանիկ որդի Մելիքսէթի (վրացերէն կրճատ՝ Մելքօ) կեանքից, որ պրոֆ. Մելիքսէթբէզը հանել է Սայեաթ Նովայի հիմնական Դաւթարից :

Այդ Դաւթարը առաջ պահւում էր բանաստեղծի կնոջ մօտ : Վերջինիս մահից եւ Սայեաթ Նովայի կուսակրօնութիւն ընդունելուց յետոյ երեխաները ապրում էին իրենց պատկեր (վրացերէն) Շավերդան պապոյի մօտ : Երբ փոքրիկ Մելիքսէթը-Մելքօ սկսեց գիր-կարդում սովորել, պապը երբեմն նրան տալիս էր հօր Դաւթարը, որի լուսանցքների վրա մանուկը վարժութեան համար գրեր էր գրում : Այդ գրերի մօտ կան պապի մակագրութիւնները՝ թիֆլիսի վրաց բարբառով, խիստ անդրագէտ ձեւով : Առաջին երկու մակագրութիւնները վերաբերում են Մելքօին, իսկ վերջին երկուսը ուղղւած են Մելքօի հօրը՝ մեր բանաստեղծին, որ այն ժամանակ երեւի արդէն վարդապետ էր :

Ահա այդ մակագրութիւնները .

- 1). Եղիս բարօր, Մելքօ :
- 2). Քո պապի (պարոն) Շավերդի զոյտ աչքերի լոյտ աշակերտ Մելքօ, հէնց որ իմացաւ,, խկոյն ցոյց տեսց իմացած լինելը :
- 3). Թող' բարօր լինի քո որդի Մելքօն, ով տէր Յիսուս Քրիստոս :
- 4). Թող' բարի յիշեն քո որդի Մելքօին :

Այս կցկառուր ու պարզունակ խօսքերի մէջ, Դաւթարի լուսանցքների վրա, այնպէս կենդանի, երեւում են թէ ինելացի մանուկը, թէ նրա գորովալից ու քնքոյշ պապը եւ թէ հեռու տեղ ապրող հայրիկը, որին կարօտով յիշում են ուրախութեան վայրկեաններին :

## XX

### ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԸ

Սայեաթ Նովայի մահւան պարագաները եւ ժամանակը առանձին վէճի առարկայ չեն եղել : Բոլոր հետազոտողները աւելի կամ պակաս չափով ընդունել են դ. Ախմերկեանի դեռ 1852 թ. առաջարկած վարկածը : Միայն 1930 թ. դ. Լէոնիձէն եւ պրոֆ. Լ. Մելիքսէթբէզը, իրարից բոլորովին անկախ, քննութեան ենթարկեցին այս հարցը եւ եկան այն եղբակացութեան, որ Ախմերկեանի տեսա-

կէտը սիսալ է : Լէոնիձէն ևնթաղրում է , թէ Սայեաթ Նովան մեռել է բնական մահով 1801 թ . , կամ աւելի ուշ : Իսկ Մելիքսէթքէդը կարծում է , թէ Սայեաթ Նովան ոչ թէ սպանւել է Թիֆլիսի գլուխաման ժամանակ , 1795 թ . , այլ մեռել է աւելի ուշ , Հախաղատում , հաւանաբար , 1801 թ . , ինչպէս ասում է Պ. Իսուելիանին :

«Շատին յայտնի է Թիֆլիզում» , գրում էր 1852-ին Գ. Ախվերդիսին , «որ Սայեաթ-Նովէն՝ լսելով Աղա-Մահմէդիանի հեծելազօրի Վրաստանի սահմանին մօտենալն , միա է բերում իր զաւակներուն ու գալիս է Թիֆլիդ : Իս տեղաց ուղարկում է նրանց Մօղեօկ , ուր սրանք գցում են իրանց բնակութիւնն : Սայեաթ-Նովէն գնում է իր զաւակներուն ճանապարհ թէ չէ , Պարսիկքն մտնում են Թիֆլիդ : Հաղպատու առաջնորդարանն հչնց բերդի տակն ըլելով՝ թշնամիքն տուն են ընկնում եկեղեցու գաւիթն , ու կցում են կոտորելն ու կողպատելն : Սայեաթ-Նովուն վրայ են հասնում եկեղեցում աղօթք անելիս : Սրանից պահանջում են գուրս գան ու հաւատն ուրանալիք բայց կրօնաւորն Պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով .

«Քրիմանամ քլիսաղան , գօնմանամ իսադան»\*)

«Էսպէս խալիս նօքարն նահատակում է որպէս ծառայ Աստուծոյ սեպաեմբեր սմսին 1795ին :

«Մէքանի օրից՝ Պարսից Թիֆլիզէն գուրս գնալուց յետոյ , վեր են առնում նրա մարմինն ու թաղում են Մեծ բերդի եկեղեցու հիւսիսային փոքր դրան առջեւն : Թէպէտ Սայեաթ-Նովու գերեզմանն չունի քար գցած , բայց էսպէս պատմում են նրա թաղման պատահողներն» :

Սայեաթ Նովայի մահւան այս պատմութիւնը , Ախվերդեանը առել է Թիֆլիսում շրջան անող աւանդութիւնից («Շատին յայտնի է Թիֆլիզում») եւ , իրը թէ , Սայեաթ Նովայի յուղարկաւորութեան ներկայ գտնուած ծերերի պատմածներից : Կենսագրութեան այս ձեզ այնուհետեւ նւիրազործւեց եւ աւելի կամ նւազ ձեւափոխութիւններով կրկնում էր Սայեաթ Նովայի մասին խօսող բոլոր հեղինակների գրաւածքներում , ինչպէս Պոլոնսկիի , Մթածմինդելիի , Քիշմիշեանի , Պոտոսի , Յ. Թումանեանի , պրոֆ. Խանանիչվիլիի , Վալ. Բրիւսովի , պրոֆ. Կեկելիձէի , Գրիշաշվիլիի , Լէօի եւ ուրիշ շատերի : Ոմանք հաւասարացնում էին , որ Սայեաթ Նովան մեռցւել է ե-

\*) Լէօնիձէն առաջարկում է կարդալ երկտող ոտանաւորի ձեւով –

Իսա – դան դօն – մանամ

Քլիսա – դան չըլս – մանամ

կեղեցում, աղօթելիս, ուրիշներ՝ թէ սպանւել է եկեղեցու շեմքին, սազ նւազելիս և երգով թիֆլիսի խաղաղ բնակիչների վերաբերմամբ գութ ու ներողամտութիւն խնդրելիս, եւայլն։ Իսկ լէօն նոյն իսկ պնդում է, թէ Սայեաթ Նովան սպանւել է ոչ թէ եկեղեցում, այլ ճանապարհին՝ դէպի շահի բանակատեղին, ուր գնում էր խնդրելու համար, որ թիֆլիսի խաղաղ բնակչութիւնը խնայւի։

Բոլորովին առանձին տեղ է գրաւում Պլատոն Իոսելիանիի պընդումը, թէ Սայեաթ Նովան վախճանւել է 1801 թւին։ Իոսելիանին՝ իրակլի Բ. եւ Գէորգի Ժ. թագաւորների տաներէցի որդին՝ ծն. 1809 թ., իր հօրից ստացել էր շատ տեղեկութիւններ վրաց արքունիքի կեանքի մասին։ Նրա հաղորդած տեղեկութիւնները առհասարակ ճիշտ են։ Իր «Գէորգի Ժ. թագաւորի կեանքը» վրացերէն դըրքում նա յայտնում է, որ Սայեաթ Նովան մեռել է 1801 թ.։

Իր առաջ բերած աւանդութեան որոշ հաստատութիւն է տեսնում Ախվերդեանը եւ աշուղ Շամչի Մելքոն մուսթագադի (երդի տեսակ) մէջ, ուր Նկարագրում է թիֆլիսի գրաւումը պարսկիներից։ Շամչի-Մելքոն ժամանակով Սայեաթ Նովայի ամենից մօտիկ աշուղներից էր, նրա եռանդուն հետեւորդը, թերեւս աշակերտը։ Ժամանակակից էր Աղա Մահաղ խանի արշաւանքին, որին զոհ տեսց իր հօրը, մօրը, եղբօրը եւ երկու քոյլերին։ Շամչի Մելքոնի այն երդում, որ ամբողջապէս տպւած է Միանսարեանի «Քնար Հայկական» ոռում (էջ 564-5), ի միջի այլոց տուած է։

Վարդապիտնիր կոտորեցին, լէշիր էր ածած տէրտէրի։

Շամչի Մելքոն սպանւած վարդապէտների եւ տէրտէրների անուն չի տալիս, որ Ախվերդեանին հնարաւորութիւն է տալիս ենթագրելու, թէ կոտորւած վարդապէտների թւում եղել է եւ Սայեաթ Նովան։

Ժամանակի բնթացքում երեւան եկաւ եւ մի ուրիշ աղբիւր, որ խօսում է նոյն դէպքի մասին։ Այդ Սերովիք Գրիչն է, որ Նկարագրերէ է թիֆլիսի գրաւումը Աղա Մահաղ խանի ձեռքով։ Այդ տեղ, ի միջի այլոց, ասւած է հետեւեալը։

«Միանդամայն զերծաւ եւ Մողնու սուրբ Գէօրգեայ հրաշալի մասն, որոյ սակի մահու չափ չարչարեցաւ աւագագոյն քաղանայն նոյն եկեղեցոյ բարձրապատիւ եւ խոհեմամիտ տէր Գրիգորն Տէր-Շմաւոնեանց, որ եւ գրեթէ կենդանի նահատակ իսկ եղեւ ի փառս Աստուծոյ՝ եւ ի պատիւ սրբոյ Գէօրգեայ որ լիցի միջնորդ առ Աս-

տըուած զսոյն հաւատարիմ ծառայէն գրել զանունն ի դպրութեան կենաց . ամէն» :\*)

Իր համառօտ պատմութեան մէջ Սերովբէ Գրիչը մանրամասնօրէն ներկայացնում է Թիֆլիսի գրաւման եւ աւերման պարագաները : Հաղորդում է նաև անունը այն տէրտէրի, «որի «լէշիր էր ածած» : Դա տէր Գրիգոր Տէր Շմաւոնէանն է, բայց սպանւած վարդապետների անուն չի տալիս եւ ոչ էլ յիշում է նրանց մասին : Մինչդեռ շատ տեղին էր, «որ այլ հանդամանօրէն արւած պատմութեան մէջ յիշւէր եւ Սայեաթ Նովայի հաւատի համար նահատակւելը, որ յար եւ նման էր տէր Գրիգորի նահատակութեան : Եթէ Սայեաթ Նովան սպանւած լինէր Թիֆլիսի գրաւման ժամանակ, գժւար թէ Սերովբէ Գրիչին յայտնի չլինէր, հետեւարար եւ տեղ կը բռնէր նրա պատմութեան մէջ :

Հայերէն մի աղբիւր էլ կայ Հախսպատի միաբանների սպանութեան մասին Աղա-Մահմադ խանի արշաւանքի ժամանակ : Դա Հախսպատ եւ Սանահին վանքերի նկարագրութիւնն է Ղրիմեցի Յովհան վարդապետիք\*\*\*) ձեռքով, ուր պատմում է, թէ ինչպէս պարսիկները գրաւեցին Հախսպատի առաջնորդաբանը Թիֆլիսում, բերդի թաղում : Այդտեղ ասւած է հետեւեալը . «Երբ Աղա-Մահմադ խանը արշաւեց Վրաստանի վրա, Հախսպատի վարդապետները պահւեցին Թիֆլիսում : Պարսիկ յառաջապահ զօրամասը, որ բաղկացած էր մաղանդարանցիներից, քաղաքը գրաւելիս, ամենից առաջ մտաւ բերդի մեծ եկեղեցին, ուր թաղնաւծ էին Հախսպատցի վարդապետները : Թշնամին կռոտրեց վարդապետներին, եկեղեցին թալանեց, իսկ վահաճօրը գերի տարաւ Գանձակ» :

\*) Սերովբէ Գրիչ. «Համառօտ պատմութիւն աւիրեցման Փայտակարան Մայրաքաղաքին ի խանէն Աղա-Մահմադի 1795 եւ ի 11սեպտեմբերի» . «Գիւան Հայոց Պատմութեան» Գիրք Ժ., Էջ 353-374 :

Սերովիէ Գրիչը, ի միջի այլոց, ասում է, թէ այդ օրերին ոռւսական գօրքերը որ 1783 թ. դաշնագրով պարտաւոր էին պաշտպանել Թիֆլիսը պարսիկներից եւ րիւրքերից, հեռացան Վրաստանից կովկասիան ոռւս բանակի հրամանատարի կարգադրութեամբ, որ կաշառւած էր պարսիկներից . նոյնը պնդում է եւ Վրաստանի վերջին քաղաքանակ Գանձակ :

\*\*) Մի մասը ոռւսերէն քարգմանութեամբ եւ քրանսերէն հակիրն ամփոփումով հրատարակւած է Brosset "Memoire de l'Académie des Sciences S.P.B." VI, N 6 հասորում : Սմբատ Տէր-Աւետիսեանը նոր-Զուղայում պատրաստել է այդ վաւերագիրը հրատարակութեան համար : Լէռնիձէն, որից խաղում ենք այս պատմութիւնը, օգտւել է Ս. Տէր-Աւետիսեանի դեռ անոնիպ ձեռագրից :

Այս վկայութեամբ Շամչի Մելքօի երկրորդ տեղեկութիւնն է Հաստատւում է, այստեղ էլ սպանւած վարդապետների շարքին Յովհան Ղրիմեցին չէ տալիս Սայեաթ Նովայի անունը: Լէսնիձէն իրաւամբ զարմանում է, թէ ինչպէս Յովինան Ղրիմեցու նման «Հայոպատցի մի հայլենասէր» լուսթեամբ է անցնում Սայեաթ Նովայի պէս մի ժողովրդական երդչի հաւատի համար յանձն առած նահատակութեան վրայից: Եւ լէսնիձէի զարմանքը, ի հարկէ, անտեղի չէ:

Նմանապէս լուս են անցնում Սայեաթ Նովայի նահատակութեան վրայից եւ ուրիշ երկու հայ ականատեսներ, որոնք անում են Թիֆլիսի գրաւման եւ աւերման պատմութիւնը: Առաջինը Յովհաննէս աւագ քահանայ Ոսկերչեանցն \*) է: Նրանից յետոյ գալիս է Յարութիւն Արարատեանը, որ թողել է իր կենսագրութիւնը, որի մէջ մանրամասնօրէն նկարագրւած է Թիֆլիսի աւերումը պարսիկների կողմից :\*\*\*) ....

Գ. Լեւոնեանը, որ Գ. Ասատուրի հետ միասին, խորապէս վըրդովլած է Գ. Լէսնիձէի եւ Լ. Մելքօսէթքէզի կատարած հետազօտութիւնների առթիւ, որ սրանք ոչնչացնում են Սայեաթ Նովայի նահատակութեան գեղեցիկ պատմութիւնը, բուռն կերպով յարձակում է երկու հետազօտողների վրա, պնդելով, թէ Յ. Արարատեանի գրաւմ ճանաչւած է կեղծ\*\*\*): Գ. Լեւոնեանի այս պնդումը ճիշտ է մասամբ միայն, որովհետեւ այնտեղ, ուր խօսուում է ոչ անձնական բնոյթ կրող նիւթերի մասին, Արարատեանի արած պատմութիւնները բաւական ճիշտ են: Մնաց որ Արարատեանի գրաւմը առաջ է բերում սոսկ իրրեւ երկրորդական տւեալ, լրացնելու համար հիմնական փաստերը :

Թիֆլիսի գրաւման ժամանակակից վրացիների հաղորդած տեղեկութիւնները է՛լ աւելի նիւթ են տալիս կասկածելու Ախվերդեանի

\*) Ոսկերչեանցի պատմութեան հայերէն բնագիրը տպւած է «Կոռևնկ Հայոց Աշխարհք»-ում, 1862 թ. № 2 եւ 8: Ֆրանսերէն քարգմանութիւնը՝ Klaproth, "Mémoires relatifs à l'Asie", Paris, 1824: Ռուսերէն հատւածներ՝ «Կաւկազսկայա Ստարինա», 1873, Ալ. Երիցեանի քարգմանութեամբ:

\*\*) «Արտեմիյ Արարատսկու կեամբը, գրւած իր ձեռքով, քարգմանած հայերէնից ոռուսերէն». Ս. Պետերբուրգ, 1813, հատ. I, II.

\*\*\*) «Յարութիւն Արարատեամի կեղծիքը», պարզեց Ա. Եպ. Ս., Բաքու, 1894: Արխստ. Եպ. Սեդրակեանի գրքոյկը, ուր մանրամասն բնութիւններով ու համեմատութիւններով ցոյց է տրած, որ Արարատեամի գրածները իր մասին նիշտ չեն:

առաջ բերած աւանդութեան մասին։ Դրանք Վրաստանի վերջին թագաւոր Գէորգի ժԴ. կ երեք որդիներն են, արքայազն Դաւիթը, թէ յմուրաղը եւ Իոանը։ Պէտք է ի նկատի ունենալ, որ Սայեաթ Նովայի հոչակը մնաց անաղարտ վրաց արքունիքում։ Նրա երդերը երդում էին հետագայ պալատական աշուղները, նրան հետեւում էին բանաստեղծներն ու երգիչները, նրա անունը ամենքի բերանին էր։ Արքայական ընտանիքի անդամների յափշտակութիւնը Սայեաթ Նովայի երդերով այնքան մեծ էր, որ երբ Վրաստանի անկախութեան անկումից յետոյ արքայական ամբողջ տունը տարագրւեց Ռուսաստան, թաղաւորի որդիները իրենց մօտ բերին Սայեաթ Նովայի որդի իվան Սէյիդովին, որի միակ պարտականութիւնն էր Երգել հօր երդերը։ Բոլոր այդ արքայորդիները շատ լաւ գիտէին, թէ ով էր Սայեաթ Նովան, զնահատում էին շատ բարձր նրան ստեղծագործութիւնը եւ չէին կարող չլիշել իրենց սիրելի անձնաւորութեան ողբերգական մահը, եթէ այդպիսի մահ տեղի ունեցած լինէր։

Արդ՝ երեք եղբայրներից անդրանիկը՝ արքայազն Դաւիթը թողել է «Նիւթեր Վրաստանի Պատմութեան» գրւածքը,\*) ուր թիֆլիսի գրաւման պատմութեան նւիրւած էջերում մանրամասնօրէն խօսւում է թիֆլիսի մօտ եղած ճակատամարտի մասին, արւում է պալատական սաղանդար հայազգի Աղաջան Ղուլամանաշվիլիի գերի ընկնելու պատմութիւնը, յիշւում են քաղաքի գրաւման ժամանակ սպանւած քիչ-շատ յայտնի քաղաքացիների անունները, վերջապէս, տրուում են Կիտա Ամբարդանաշվիլիի\*\*։) Հարսի նահատակութեան մանրամասնութիւնները - նա գերի էր տարւել թաւրիզ եւ մերժելով ընդունել մահմեղականութիւն՝ դրւել էր տոսպրակի մէջ եւ դաշունահար սպանւել էր։ Նրա գերեզմանը թաւրիզում ուխտավայր էր, ուր գալիս էին բժշկութիւն խնդրող հիւանդները եւ յաճախ հեռանում էին ասպաքինւած։ Աւելի յարմար տեղ կարելի չէ պատկերացնել՝ յիշելու համար եւ Սայեաթ Նովայի նահատակութիւնը, մի անձի, որ շատ աւելի մօտիկ էր հեղինակի սրտին, քան Ամբարդանաշվիլիի հարսը, բայց ոչ մի խօսք չկայ այդ մասին։ Հէնց միակ այս փաստը բաւական է կասկածի տակ զնելու Ախվերդեանի սածը։

\*) Հրատարակւած 1906 թ. Թիֆլիսում։ Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ Brosset, "Histoire de la Géorgie", I. II, 2<sup>ème</sup> partie.

\*\*) Հայ Ամբարտանաշվիլիի տոհմը Վրաստանում ժառանգաբար կառավարում էր պետական պահեստները։

Արքայազն Թէյմուլազն էլ գրել է Աղա-Մահմադ խանի արշաւանքի եւ Թիֆլիսի գրաւման մասին :\*) Նրա մանրամասն եւ խիստ հետաքրքրական պատմութեան մէջ յիշւում է, ի միջի այլոց, Թիֆլիսի քաղաքացիների, այսինքն՝ հայերի կազմակերպած կամաւորական խմբի վայլուն մասնակցութիւնը Թիֆլիսի պաշտպանութեան գործում : Խմբի հրամանատարն էր ոմն Մաչարելի, իրակլիի արքունի նւազախմբի վարիչ եւ գերասան, կամ, ինչպէս կոչում է Թէյմուլազը, մուսիկի դա կոմեդիանտի : Կամաւորների այդ խումբը մի քանի անգամ յարձակւել է թշնամու վրա՝ Մաչարելիի ուրախու գլանի երգերի եւ նւագի ընկերակցութեամբ : Նոյն խոկ ինքը Աղա-Մահմադ խանը խոստովանել է այդ խմբի աչքի ընկնող քաջութիւնը :

Նոյն Թէյմուլազը իր գրքերի և ձեռագիրների մեջ արդէն ծանօթ ցանկում հաղորդում է մի շարք կենսագրական տեղեկութիւններ Սայեաթ Նովայի մասին եւ զարձեալ ոչ մի խօսք, ոչ մի ակնարկ անգամ՝ բանաստեղծի նահատակութեան մասին : Թէյմուլազը ամենից մօտն էր Սայեաթ Նովային : Նրա հրամանով էր որ բանաստեղծի որդի Օհանը գրի առու հօր երգերը : Այս պայմաններում գժւար է ենթագրել, որ Թէյմուլազը չէր կարող չգիտանալ Սայեաթ Նովայի եղերական վախճանի մասին եւ զիտնալով հանդերձ՝ լոէր ու չարձանագրէր մի գէպք, որ է՛լ աւելի պիտի գեղեցկացնէր իր սիրած բանաստեղծի բարոյական պատկերը :

Վերջապէս, երրորդ եղբայրը՝ արքայազն Եռանը հեղինակն է կամ խմբագիրը՝ պատմական – խրատական «Կալմասոր» վէսի, որի մասին յիշել ենք մէկից աւելի անգամներ : Այդ տեղ նաև ամենայն մանրամասնութեամբ պատմում է, թէ ինչպէս Խելաշվիլին տեսնել է Սայեաթ Նովայի հետ, չախատում, Գէրոդի Ժ. Թագաւորութեան վերջին ապրիները, այսինքն՝ Աղա-Մահմադ խանի արշաւանքից յետոյ, 1800 թւին :\*\*)

Այսպէս, ուրեմն, Վրաստանի վերջին ապրիների պատմութեան մասին խօսող երեք արքայորդիների երկուսը, հնարաւորութիւն եւ

\*) Ֆրանսերէն քարգմանուրեան հետ իրատարակւած էլիմատիւպ – Brossat, "Mémoires inédits, relatifs à l'histoire de la Géorgie", Արտասպել է Զուրիմովը իր «Վրացերէն Քրիստոնակա»-յի մէջ է. լ., թ. 1., թ. 175-197:

\*\*) Դախընքաց օրը Խելաշվիլին այցելել է Սամահնում իշխան Սողոմոն Արդուրիանին եւ հետո խօսակցուրիւն ունեցել Վրաստանում Գէրոդի Ժ. Պագաւորութեան վերջին ամիսներին, այսինքն՝ 1800 թ. աշնանը ծագած դէպքերի մասին :

նոյն իսկ անհրաժեշտութիւն ունենալով հանդերձ յիշելու Սայեաք Նովայի եղերական վախճանի մասին, ոչ մի բառով չեն յիշում իսկ երրորդը՝ Եռանը՝ ասում է, թէ Սայեաք Նովան 1800 թ. աշնանը դեռ ողջ եւ ասող էր: Այս փաստերը իրաւունք են տալիս ընդունելու, որ Պլատոն Եռուլիանիի հազորդած տարեթիւը Սայեաք Նովայի մահւան մասին, այսինքն՝ 1801 թ., ճիշտ է:

Սակայն, կայ մի շատ կարեւոր հանդամանք, որ Գ. Ասատուրին էլ, Գ. Լեռոնեանին էլ ստիպում է պաշտպանել աւանդական տարեթիւը: Բանաստեղծի որդի Իվան Սէյխովի իր հօր երգերից մի քանիսի տակ դրել է ծանօթութիւններ, որոնց մէջ հօր մասին ասում է՝ «Հանդուցեալ» (մեցվալէ, մեցվալերուլի), այնպէս՝ ինչ պէս սովորաբար խօսում են բնական մահով մեռած մարդկանց մասին, իսկ ծանօթութիւններից մէկում, որի հայերէն թարգմանութիւնը հրատարակել է Գ. Ասատուրը («Ազգ. Հանդէս», թ էջ 100) եւ որ դրւած է միայն Իվան Սէյխովի ժողոված ւում զտնող հայերէն մի երգի տակ - «Եսաբար զընաց բուլբուլի մօս» - ասւած է ուրիշ կերպ: Այդ ստանաւորը վերջանում է հետեւեալ երկտողով.

Աշխարհումըս քանի սաղ եմ, Սայեաք Նովի գերեզմանըն  
Շահաբասի լալի նըման շահի վէր գալուն մընում է:\*)

Ահա Իվան Սէյխովի այդ մակագրութիւնը.

«Այս մուխամբազը Սայեաք Նովան յօրինեց, որ շահը (Աղա-Մահման, աւելացնում է Գ. Ասատուրը) պէտք է զայ մեծ ժխորով նրա զերեղմանի գրաւ այս էր պատճառը, որ նրան մաս մաս արին...» Օհանը, շարունակում է Գ. Ասատուրը, ուղում է ասել, թէ Սայեաք Նովան այս երգով գուշակել էր, թէ ինչ մահով պիտի մեռնի:

Սակայն, Օհանի այս կարծիքը, թէկուզ իսխատ զդուչութեամբ արտայայտած, բնաւ չի կապւում իր իսկ Դաւթարում հօր մասին ամէն քայլափոխին դրւած, «Հանդուցեալ», բայց ոչ «սպանւած»

\*) Վերջերս, Գ. Ախվերդեանի քայլերի մէջ Գ. Ասատուրին յաջողութեամբ այս երգի մի նոր փոփոխակ, որ կը հրատարակի «Վէմ»-ում: Այդ փոփոխակում մեզ հետաքրքր տողերը բերւած են հետեւեալ ձեռով.

Հինչանք էրի դռն սաղ բլիս, ջուրն տանէ Սայեաք Նովին.

Շահաբասի լալի նման շահըն վրէթ գալուն մընում է:

Այս տողերը, ինչպէս տեսմում ենք, ուղղւած են ոչ քէ իրեն՝ Սայեաք Նովային, այլ սիրուեան: Այդ պարագան մեզ չպէտք է զարմացնէ: իր որդու Ծիամի Պիայութիւնից եւ յայտնի է, որ Սայեաք Նովան յոթայն նոյն երգը տարրեր պայմաններում երգում էր տարրեր բովանդակութեամբ:

կամ «նահատակ» արտայայտութեան հետ։ Նա հակասում է նաև «Կալմասոբա»-յում հաստատած փաստի հետ, որ 1800 թ. աշնանը դեռ Սայեաթ Նովան ողջ էր։ Օհանի յայտնած կարծիքի պատճառը, թերեւս, այն էր, որ 19-րդ դարու 20-ական թւականներին, երբ Օհանը գրի էր առնում հօր տաղերը, արդէն Պետերբուրգ էր հասել Սայեաթ Նովայի նահատակութեան մասին Թիֆլիսում ստեղծւած գեղեցիկ աւանդութիւնը։ Այդ աւանդութիւնը շոյում էր Օհանի ինքնասիրութիւնը, եւ նա վախիսելով, կարծես պատահաբար, բաւական անորոշ ձեւով, ընդամենը մէկ անդամ միայն յիշում է իր Դաւթարի մէջ։ Հաստատ կերպով նա չէր կարող արձանագրել հօր ըսպանած լինելը պարսիկներից, քանի որ արքայորդիները, որոնց համար նա գրի էր առնում երգերը, շատ լաւ ծանօթ էին Սայեաթ Նովայի մահւան պարագաներին։

Բայց ի՞նչ հիմք կար Սայեաթ Նովայի մահւան մասին նման աւանդութեան ստեղծւելուն։ Աղա-Մահմադ խանի արշաւանքից եւ Թիֆլիսի զրաւումից ու աւերումից յետոյ ժողովրդի մտքում մը-նացել էին հետեւեալ փաստերը։

ա) Մողնու Սուրբ Գէորգ եկեղեցու շեմքում նահատակւել էր Տէր-Շմաւոնեանց քահանան։

բ) Հախուատի վանքի Թիֆլիսի առաջնորդարանը, որ գտնուում էր բերդի Սուրբ Գէորգ մէծ եկեղեցու կողքին, թալանւել էր պարսիկ զինուորների ձեռքով եւ վարդապետների մի մասը սպանւել։

դ) Պալատական սաղանդար Մաչարելին, իրեւ թիֆլիսի կամաւորների հրամանատար, հռչակւել էր պարսիկների գէմ մղած կը-ուիւներում, իսկ մի ուրիշ պալատական սաղանդար Աղաջան Ղալամաշվիլին գերի էր ընկել պարսիկների ձեռքը։

դ) Սայեաթ Նովան հեռացել էր Թիֆլիսի կեանքի հորիզոնից և խաղաղ ապրում էր Հախուատի վանքում, ուր եւ վախճանեց 1801 թւին։ Եւ վանական պայմանները այնպէս էին, որ նրա վանքում լինելու կամ մահւան մասին որեւէ մէկին լուր տալու պէտք չկար։

Այս փաստերը բաւական էին, որպէսզի հանրային երեւակայութիւնը ստեղծէր Սայեաթ Նովայի նահատակութեան աւանդութիւնը։ Թիֆլիսի աւերումից յետոյ Սայեաթ Նովան այլեւս չէր երեւում քաղաքում, նշանակում է նա էլ սպանւել էր Ս. Գէորգ եկեղեցում կոտորուած վարդապետների հետ։ Հասարակութիւնը մտածում էր, որ Սայեաթ Նովան չէր կարող կեանքից հեռանալ առանց մի գեղեցիկ խօսք ասելու։ Եւ այդ խօսքն գտնւեց։

Խաղաղ դօն – մանամ,

Քլիսադան չըխ – մանամ։

Մելիքսէթբէգը ենթադրում է, որ այս խօսքին իրեւ նախատիպ ծառայել է Սայեաթ Նովայի թիւրքերէն երգերից մէկի (Ակովերդէան, էջ ժա) հետեւեալ տողը.

Սայեար Նովա դիմիսի ինքար էրմա՝ էրմանի դուր:

— Սայեաթ Նովան հաւատը չի՛ ուրանայ՝ հայ է:

(ՎԵՐՋ)

Փարիզ.

